*մի մեզի պահած է. որովհետեւ հոն սանկ կը կարդանք. "Զայնսպիսիսն ազովեսցի, զի եւ զնոսա ազովք կամիցողիցէ՛ք,,: Ինա-
յած մասէն ալ՝ բաւական կտորուանք կը գտնենք Լամբրոնացւոյն քով իր Հանգանակի Մեկնութեանը մէջ, երբ որ ընդարձակ մեկնաբանութեամբ մը աս խօսքերը կը գրէ նոյնին վերջերը. "Իսկ նոքա դք այլայլելի կամ փոփոխելի զմի եւ զնոյնութեամբ բարի աստուածութիւն ամենասուրբ Երրորդութեան իշխեցին հայհոյել եւ աստուածամարտք երեւեցան, ազովեմք եւ տարագրեմք զնոսա յԱստուծոյ եւ յօրհնութենէ ուղղադատաւն հաւատացելոց նոցա, եւ ոչ միայն մեք, այլ եւ ընդհանրական կամիցողիցէ՛ն սուրբ եկեղեցի ազովէ եւ տարագրէ զնոսա ի հաղորդութենէ ամենայն սրբոց եւ սիրելեաց Աստուծոյ. քանզի օտարացան նոքա ի մէնջ, այս ինքն ի սկզբանէ կենաց իւրեանց,,:*

Այս վայր մէջ ընդ մէջ նշանակածնելնիս յայտնի է՝ որ Լամբրոնացին ունեցած է ձեռքը աս Հանգանակին թարգմանութենէն ամբողջ օրինակ մը, բոլորովին անկախ ան բնագրէն՝ որն որ մեր ծիսական գրոց մէջ հասարակ է:

Երդ որովհետեւ աս հայերէն բնագիրը իւր նախնական ամբողջութեանը վերածեցինք, դնենք հիմայ երկու բնագիրներն ալ, հայը եւ յոյնը, դիմացի դիմաց:

ՀԱՆԳԱՆԱԿԻՆ

ՀԱՅԵՐԷՆ ԲՆԱԳԻՐԸ [1]

Հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ, արարիչ երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից. եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ ծնեալ յԱստուծոյ Հօրէ Միածին, այս ինքն յէութենէ Հօր, Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնեալ եւ ոչ արարեալ, նոյնութիւն Հօր, որով ամենայն ինչ եղեւ որ ինչ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք. որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան, իջեալ յերկինից մարմնացաւ, մարդացաւ, (այս ինքն) ծնաւ կատարեալսէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն սրբով, որ եւ (էառ) մարմին (եւ) հոգի եւ միտս եւ զամենայն որ ինչ է մարդ (ի մարդ) բաց ի մեղաց, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք ունելով. չարչարեալ, այս ինքն խաչեալ, թաղեալ

ՅՈՅՆ ԲՆԱԳԻՐԸ

Πιστεύομεν εἰς ἕνα Θεὸν Πατέρα παντοκράτορα, πάντων ὁρατῶν τε καὶ ἀοράτων ποιητήν. καὶ εἰς ἕνα Κύριον Ἰησοῦν Χριστὸν τὸν Υἱὸν τοῦ Θεοῦ, γεννηθέντα ἐκ τοῦ Πατρὸς μονογενῆ, τουτέστιν ἐκ τῆς οὐσίας τοῦ Πατρὸς, Θεὸν ἐκ Θεοῦ, φῶς ἐκ φωτὸς, Θεὸν ἀληθινὸν ἐκ Θεοῦ ἀληθινοῦ, γεννηθέντα οὐ ποιηθέντα, ὁμοούσιον τῷ Πατρὶ· δι' οὗ τὰ πάντα ἐγένετο τά τε ἐν τῷ οὐρανῷ, καὶ τὰ ἐπὶ τῆς γῆς, ὁρατά τε καὶ ἀόρατα· τὸν δι' ἡμᾶς τοὺς ἀνθρώπους καὶ διὰ τὴν ἡμετέραν σωτηρίαν κατελθόντα, σαρκωθέντα, ἐνανθρωπήσαντα, τουτέστι γεννηθέντα τελείως ἐκ Μαρίας τῆς ἀειπαρθένου διὰ Πνεύματος ἁγίου, σῶμα καὶ ψυχὴν καὶ νοῦν, καὶ πάντα ὅσα ἐστὶν ἀνθρώ-

[1] Ըստ գրչագրաց եւ հին մատենագրաց: